ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

ՀԱԱՀ-ԳՀԱՊՁԲ-20/15 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

(իրականացված հարցման կարգով)

ք. Երևան «21» ապրիլի 2020թ.

2020թ-ի մարտի 19 - ապրիլի 21, ՀՀ, ք. Երևան, Տերյան 74 հասցեում գտնվող «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի (այսուհետ նաև ՀԱԱՀ հիմնադրամ) շենքում տեղի ունեցավ ՀԱԱՀ-ԳՀԱՊՁԲ-20/15 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) նիստը: Հանձնաժողովի նիստին մասնակցում էին՝

Գ. Սամվելյան	ՀԱԱՀ հիմնադրամի Ոսկեհատի խաղողագինեգործության ԳԿ տնօրենի պաշտոնակատար,
Ս. Ռաֆայելյան	ՀԱԱՀ հիմնադրամի ԳՄ և Ա ԳՀԻ Դաշտավարության մեքենայացման բաժնի գիտաշխատող,
Ա. Բաբայան	ՀԱԱՀ հիմնադրամի ԳՄԱ և ՏՇ ամբիոնի դասախոս,
Ա. Գրիգորյան	ՀԱԱՀ հիմնադրամի ԳՄ և Ա ԳՀԻ Դաշտավարության մեքենայացման բաժնի գիտաշխատող,
Մ. Չիլինգարյան	ՀԱԱՀ հիմնադրամի Ոսկեհատի խաղողագինեգործության ԳԿ հաշվապահ,
Ե. Հարությունյան	ՀԱԱՀ հիմնադրամի գնումների բաժնի գնումների մասնագետ

Հաշվի առնելով, որ հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի բոլոր անդամները, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն, հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Գ. Սամվելյանը, իսկ քարտուղարն էր՝ Ե. Հարությունյանը:

ՕՐԱԿԱՐԳ

1. ՀԱԱՀ-ԳՀԱՊՁԲ-20/15 ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու հայտեր ներկայացրած անձանց, վերջիններիս կողմից ներկայացված հայտերի գնահատման և առաջարկված գների մասին:
2. Ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներ որոշելու մասին:
3. Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը հաստատելու մասին:

1. ՀԱԱՀ-ԳՀԱՊՁԲ-20/15 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԱՅՏԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ԱՆՁԱՆՑ, ՎԵՐՋԻՆՆԵՐԻՍ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՎԱԾ ԳՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի նախագահ Գ. Սամվելյանը նիստը հայտարարեց բացված և հրապարակեց գնման հայտով սահմանված՝ տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք գնվելիք գնման առարկաների գները:

Չ/Հ	Գնման առարկայի անվանումը	Գնման հայտով սահմանված ընդհանուր գինը
1.	Էլեկտրական մուֆելային վառարան	1492000
2.	Պատվաստի մեքենայական սարք	2100000

3.	Պատվաստի սեկատոր	120000
4.	Ձեռքի մանրադիտակ 60-100x	60000

ՀԱԱՀ-ԳՀԱՊՁԲ-20/15 ծածկագրով գնման ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով հրավերով սահմանված օրը և ժամին՝ 2020 թվականի մարտի 19-ին, ժամը «11:00»-ին:

Հրավերում փոփոխություններ չեն կատարվել, հարցումներ և պարզաբանումներ չեն եղել:

ՀԱԱՀ-ԳՀԱՊՁԲ-20/15 ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու հայտեր են ներկայացրել հետևյալ անձինք /այսուհետ՝ նաև մասնակիցները/.

Հ/Հ	Մասնակցի անվանում	Հասցեներ	Էլ, փոստ
1	ՊԻՊԱՍ ՖՈՒԴ ՍՊԸ	ք. Աբովյան 3-րդ մ/շ 12/27	armen8181@mail.ru
2	ԵՎ ՇԻՆ ՍՊԸ	ք. Երևան, Նորաշեն թաղ՝, 25 շ՝, բն՝ 17	yeritsyan2020@gmail.com
3	ՏՆՄ ՍՊԸ	ք. Երեւան, Օրբելի 33Ա, բն՝ 15	deltant@mail.ru
4	Մեդիսար ՍՊԸ	ք. Երեւան, Գետառի 4/9	sales@medisar.am
5	Փինք Ֆլամինգո Գ՝ և Ա Կենտրոն ՍՊԸ	ք. Երեւան, Սարյան 1 ա, բն՝ 3	mels@arminco.com
6	Սերժ Կոմպյուտերս ՍՊԸ	ք. Երեւան, Դավթաշեն 2-28-21, գտնվելու վայրը՝ ք. Երևան, Ադոնցի 6	serzh.computers@mail.ru

Հանձնաժողովն արձանագրեց, որ՝

- Հայտ/եր/ը կազմվել և ներկայացվել են ՀԱԱՀ-ԳՀԱՊՁԲ-20/15 ծածկագրով գնման ընթացակարգի /այսուհետ՝ ընթացակարգ/ հրավերի /այսուհետ՝ հրավեր/ պահանջներին համապատասխան. ,
- Ներկայացված հայտ/եր/ում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը.,

Ներկայացված հայտ/եր/ում ներառված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պայմաններին.բացառությամբ Մեդիսար ՍՊԸ-ի, որի կողմից ներկայացված՝ Հրավերի 2-րդ մասի 2.1, 2.2, և 2.6 կետերով նախատեսված համապատասխանաբար դիմում-հայտարարությունը՝ հավելված 1-ը, առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ հավելված 1.1-ը և գնային առաջարկը՝ հավելված 2-ը չեն համապատասխանում հրավերի պահանջներին: Մասնավորապես՝ հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ հավելված 1՝1-ում նաև ապրանքի ամբողջական նկարագիրը որոշ չափանիշներով չի համապատասխանում հրավերի պահանջներին, ՊԻՊԱՍ ՖՈՒԴ ՍՊԸ-ի, որի կողմից ներկայացված՝ Հրավերի 2-րդ մասի 2.1 կետով նախատեսված դիմում-հայտարարությունը՝ հավելված 1-ը, չի համապատասխանում հրավերի պահանջներին: Մասնավորապես հավելված 1-ում նշված չեն սպասարկող բանկը և չափաբաժնի համարը, ՏՆՄ ՍՊԸ-ի, որի կողմից ներկայացված՝ Հրավերի 2-րդ մասի 2.1 կետով նախատեսված դիմում-հայտարարությունը՝ հավելված 1-ը, չի համապատասխանում հրավերի պահանջներին: Մասնավորապես հավելված 1-ում նշված չեն էլ. փոստի հասցեն և հեռախոսահամարը, Փինք Ֆլամինգո Գ և Ա Կենտրոն ՍՊԸ-ի, որի կողմից ներկայացված՝ Հրավերի 2-րդ մասի 2.1 կետով նախատեսված դիմում-հայտարարությունը՝ հավելված 1-ը, չի համապատասխանում հրավերի պահանջներին: Մասնավորապես հավելված 1-ում նշված չէ սպասարկող բանկի հաշվեհամարը և ԵՎ ՇԻՆ ՍՊԸ-ի, որի կողմից ներկայացված՝ Հրավերի 2-րդ մասի 2.1 կետով նախատեսված դիմում-հայտարարությունը՝ հավելված 1-ը, չի համապատասխանում

հրավերի պահանջներին: Մասնավորապես հավելված 1-ում նշված չէ ՀՎՀՀ- իսկ հավելված 2-ը՝ գնային առաջարկը՝ չի համապատասխանում հրավերի պահանջներին:

Հանձնաժողովի նախագահը հայտարարեց հայտ/եր/ ներկայացրած մասնակիցների գնային առաջարկները՝ հիմք ընդունելով տառերով գրվածը.

Ներկայացված գնային առաջարկների և մասնակիցների ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած լինելու վերաբերյալ տեղեկատվությունը ներառված է ստորև ներկայացված աղյուսակում (այսուհետ՝ Աղյուսակ):

(ՀՀ դրամ)

Հ/հ	Չափաբաժնի անվանումը	Նախահաշվային գումար	Մասնակցի			Մասնակիցների առաջարկած գները՝	
			Զբաղեցրած տեղ	Ընտրված մասնակցի նշում «Հ»	Անվանում	Արժեք	Ընդհանուր գին
1	Էլեկտրական մուֆելային վառարան	1492000	1	Հ	Մեդիսար ՍՊԸ	1241666,67	1490000
			-	-	ԵՎ ՇԻՆ ՍՊԸ	1464130	1491000
			2		Սերժ Կոմպյուտերս ՍՊԸ	1835000	1835000
			3		Փինք Ֆլամինգո Գ և Ա Կենտրոն ՍՊԸ	6800000	8160000
2	Պատվաստի մեքենայական սարք	2100000	1	Հ	ՊԻՊԱՍ ՖՈՒԴ ՍՊԸ	1400000	1680000
			2		ՏՆՄ ՍՊԸ	1550000	1860000
			3		Մեդիսար ՍՊԸ	2000000	2400000
3*	Պատվաստի սեկատոր	120000	-	-	Մեդիսար ՍՊԸ	112500	135000
4	Ձեռքի մանրադիտակ 60-100x	60000	1	Հ	Սերժ Կոմպյուտերս ՍՊԸ	53800	53800
			2		Մեդիսար ՍՊԸ	66666,67	80000

*տվյալ չափաբաժինների մասով (3-րդ) վարվել են բանակցություններ, արդյունքները ներկայացված են ստորև:

Որոշվեց՝

1. Հանձնաժողովի նախագահի կողմից ներկայացված տեղեկատվությունն ընդունել ի գիտություն.
2. ԵՎ ՇԻՆ ՍՊԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել:
3. Նիստը կասեցնել գների նվազեցման շուրջ բանակցությունների վարման նպատակով:
4. Քարտուղարին՝ ծանուցել 3-րդ չափաբաժնի մասով բավարար գնահատված բոլոր մասնակիցներին միաժամանակյա բանակցությունների մասին
5. Ներկայացված հայտ/եր/ը գնահատել բավարար՝ բացառությամբ ԵՎ ՇԻՆ ՍՊԸ-ի:

Կողմ՝ 5

Դեմ՝ 0

Հանձաժողովն արձանագրեց, որ մասնակիցների կողմից սահմանված կարգով իրականացվել է արձանագրված անհամապատասխանությունների շտկումը:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ 3-րդ չափաբաժնի մասով մասնակիցների հետ վարվեցին միաժամանակյա բանակցություններ՝ առաջարկված գների նվազեցման նպատակով:

Բանակցությունների համար սահմանվեց ժամկետ՝ 15 րոպե տևողությամբ:

Բանակցությունների վերջնաժամկետին ոչ մի առաջարկ չի ներկայացվել:

2. ԸՆՏՐՎԱԾ ԵՎ ՀԱՋՈՐԴԱԲԱՐ ՏԵՂԵՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

Հանձնաժողովն արձանագրեց իր կողմից պատճառաբանված որոշման բացակայությունը՝ Կարգի 67-րդ կետի հիման վրա ՀՀ պետական եկամուտների կոմիտեի միջոցով մասնակցի (մասնակիցների)՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետին բավարարելու մասին հայտով ներկայացված հավաստման իսկությունը ստուգելու:

Որոշվեց՝

1. Որպես ընթացակարգի յուրաքանչյուր չափաբաժնի մասով ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներ հայտարարել Աղյուսակում համապատասխան տեղեր զբաղեցրած մասնակիցներին:
2. Ընթացակարգը 3-րդ չափաբաժնի մասով հայտարարել չկայացած, համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի:
3. Հաստատել ընթացակարգը վերոգրյալ չափաբաժիններով չկայացած հայտարելու տեքստը համաձայն հավելվածի:

Կողմ՝ 5
Դեմ՝ 0

3. ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՔՍՏԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղարը ներկայացրեց պայմանգիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստի նախագիծը:

Որոշվեց՝

1. Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը՝ համաձայն հավելվածի:

Կողմ՝ 5
Դեմ՝ 0

Հանձնաժողովի նախագահ՝

Գ. Սամվելյան _____

Հանձնաժողովի անդամներ՝

Ս. Ռաֆայելյան _____

Ա. Բաբայան _____

Ա. Գրիգորյան _____

Մ. Չիլինգարյան _____

Հանձնաժողովի քարտուղար՝

Ե. Հարությունյան _____